ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

PKF

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2021թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ընկերության բաժնետերերին

ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել

ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 18/1, 3-րդ հարկ, գրասենյակ 54, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏՈՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ՝ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա՞ է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյո՞ք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 10.05.2022թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Տնօրեն՝

Որակավորված աուդիտոր Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր Սերյոժա Մեհրաբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ԷՋ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 3

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 6

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
31.12.2021թ. դրությամբ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթգ.	31.12.2021թ.	31.12.2020թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	13	2511019	2327054
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ		0	0
Ոչ նյութական ակտիվներ	14	300	356
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար		0	6066
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**2511319**	**2333476**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	174492	206547
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	192956	38631
Տրված կանխավճարներ	16	13144	7447
Ընթացիկ ակտիվներ հարկերի գծով	16	24	24
Այլ դեբիտորական պարտքեր	16	750	945
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	155888	84420
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		537254	338014
Ընդամենը ակտիվներ		**3048573**	**2671490**
Սեփական կապիտալ և այլ պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք)կապիտալ	18	168849	168849
Չբաշխված շահույթ	19	124848	26704
Սեփական կապիտալի այլ տարրեր		0	0
Ընդամենը սեփական կապիտալ		293697	195553
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	20	1261042	1302500
Ակտիվներին վերաբերող շնորհներ	21	**1111585**	846541
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**2372627**	**2149041**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	21	41236	76789
Վարկեր և փոխառություններ		0	0
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22	165601	112436
Ստացված ընթացիկ կանխավճարներ	22	0	1736
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	23	79304	39037
Կարճաժամկետ կրեդիտ. պարտքեր սոցվճարների գծով	24	8188	3017
Կարճաժամկետ կրեդիտ. պարտքեր աշխատավարձի գծով	24	87920	80972
Այլ ընթացիկ պարտավորություններ	22	0	13092
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**382249**	**327081**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**3048573**	**2671490**

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Է. Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծնթգ.	2021թ.	2020թ.
Հասույթ	5	4724221	2370870
Իրացման ինքնարժեք	6	(3984223)	(2015840)
Համախառն շահույթ		739998	355030
Այլ եկամուտ	7	375184	125809
Իրացման ծախսեր	8	(41)	(46)
Վարչական ծախսեր	9	(768761)	(413785)
Գործառնական այլ ծախսեր	10	(145924)	(83828)
Գործառնական գործունեության արդյունքը		200456	(16821)
Ֆինանսական եկամուտ	11	6127	540
Ֆինանսական ծախս	12	(91107)	(14169)
Զուտ ֆինանսական եկամուտ (ծախս)		**(84980)**	**(13629)**
Այլ ոչ գործառնական շահույթ(վնաս)		0	0
Շահույթը մինչև շահութահարկով հարկումը		**115524**	**(30450)**
Շահութահարկի գծով (ծախս)/եկամուտ		**(25564)**	0
Շարունակվող գործոնեությունից շահույթ(վնաս)		**89912**	**(30450)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ			
Շահութահարկ			
Համապարփակ ֆինանսական արդյունք		**89912**	**(30450)**

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Է. Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
31.12.2021թ. դրությամբ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդը առ 01 հունվարի 2020թ.	168849	113712	282561
Տարվա շահույթը (վնասը).	0	(30450)	(30450)
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք	0	0	0
Նախորդ տարի. Ֆին. Արդ. Ճշգրտում	0	(56558)	(56558)
Մնացորդը առ 31.12.2020թ.	168849	26704	195553
Մնացորդը առ 01 հունվարի 2021թ.	168849	26704	195553
Տարվա շահույթը (վնասը)	0	89912	89912
Շահաբաժիններ	0		
Նախորդ տարի. Ֆին. Արդ. Ճշգրտում	0	8232	8232
Մնացորդը առ 31.12.2021թ.	**168849**	**124,848**	**293697**

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Է. Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
31.12.2021թ. դրությամբ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	**2021թ.**	**2020թ.**
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ներհոսքեր	4710642	2410362
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(2102491)	(1234730)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(939888)	(427634)
Վճարումներ ծառայությունների դիմաց	(444867)	(651183)
Վճարումներ պետական բյուջե	(767973)	(399251)
Այլ ստացված գումարներ	36418	4006
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ արտահոսքեր	(266075)	(88624)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	225766	(387054)
Դրամական միջոցների հոսքեր Ներդրումային գործունեությունից		
Հիմնական միջոցների ձեռք բերում	(30274)	(115688)
Արժեթղթերի վաճառքից մուտքեր	0	0
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր	**(30274)**	**(115688)**
Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից		
Մուտքեր վարկերից և փոխառություններից		100000
Վարկերի մարումից և փոխառությունների տրամադրումից ելքեր	(131178)	()
Շնորհների ստացումից մուտքեր	7366	532292
Տոկոսների վճարումից ելքեր		(13661)
Ֆինանսավորման գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ	(123812)	**518631**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ	**71680**	**15889**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1 հունվարի	84420	68401
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(212)	130
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ դեկտեմբերի	**155888**	**84420**

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Է. Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
31.12.2021թ. դրությամբ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ (այսուհետ՝ Ընկերություն) համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող որոշակի թվով բաժնետոմսերի:

Ընկերությունը համաձայն ՀՀ կառավարության 09.03.2001թ. թիվ 169 որոշման սեփականաշնորհվել է և հանդիսանում է ՀՀ առողջապահության նախարարության «Պրոֆեսոր Լ.Միքայելյանի անվան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ իրավահաջորդը:

Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով, այլ իրավական ակտերով և իր կանոնադրության հիման վրա:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք.Երևան, Հասրաթյան 9, գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք.Երևան, Հասրաթյան 9:

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության աշխատողների թիվը կազմել է 640 մարդ , 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 426 մարդ:

1.2 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

- տարբեր հիվանդությունների կլինիկական ախտորոշում, վիրաբուժական կոնսերվատիվ բուժում, բժշկական վերականգնման կազմակերպում,
- մասնակցություն հանրապետական և միջազգային նշանակության բժշկական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
- մասնակցություն առողջապահոթյան կազմակերպման,կառավարման, ֆինանսավորման և տնտեսավարման ժամանակակից մոդելների, մեխանիզմների ու նորմատիվների մշակմանն ու ներդրմանը,
- գիտական և գիտաբժշկական հետազոտությունների իրականացումը, ինչպես ինքնուրույն, այնպես էլ այլ հիմնարկների, ընկերությունների հետ համատեղ ծրագրերով,
- ըստ սահմանված կարգով մասնակցություն բժշկական մասնագետների դիպլոմային և հետդիպլոմային կրթության իրականացմանը,
- արտասահմանյան երկրների առողջապահական և այլ հիմնարկների, կազմակերպությունների հետ համագործակցությունը,
- հիգիենիկ և պարահիգիենիկ ապրանքների մանրածախ և մեծածախ արտադրություն և վաճառք,

- դեղամիջոցների արտադրություն,
- դեղամիջոցների մանրածախ և մեծածախ առևտուր,
- միջնակարգ մասնագիտական բուժանձնակազմի ուսուցում /դասավանդում/,
- պարենային և ոչ պարենային ապրանքների առևտուր,
- հանրային սննդի առևտուր,
- տպագրական և պատճենահանման բնագավառի աշխատանքներ:

Ընկերության գործունեությունը համարվում է լիցենզավորվող գործունեություն, որի համար Ընկերությունը առողջապահության նախարարությունից ստացել է հետևյալ լիցենզիաները՝

- ԼԻՑԵՆԶԻԱ Կ-XX-000152, տրված 30.06.2003թ. անժամկետ, բժշկական օգնության սպասարկման ձևը՝հիվանդանոցային,
- ԼԻՑԵՆԶԻԱ Կ-XX-001296, տրված 09.03.2009թ. անժամկետ, բժշկական օգնության սպասարկման տեսակը՝ ախտաբանանատոմիական, ձևը՝հիվանդանոցային,
- ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԲՕ-001986,տրված 20.10.2014թ., անժամկետ,բժշկական օգնության սպասարկման ձևը՝հիվանդանոցային և արտահիվանդանոցային,
- ԼԻՑԵՆԶԻԱ Կ-ԲՕ-002413, տրված 14.06..2018թ., անժամկետ,բժշկական օգնության սպասարկման ձևը՝հիվանդանոցային:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) պահանջների:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Անընդհատություն

Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության հիմունքով:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

4.1. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, չափվում է իր սկզբնական արժեքով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքի մոդել

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումներ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում դրանց տեղի ունենալու ժամանակ:

Մաշվածություն

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում բացառությամբ, եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արդյունքում:Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ստորև ներկայացվում է հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները՝

Դասի անվանումը	Օգտակար ծառայությունը
Շենքեր	720 ամիս
Շինություններ	240 ամիս
Մեքենա-սարքավորումներ	120ամիս
Տրանսպորտային միջոցներ	120ամիս
Արտադրատնտեսական գույք, գործիքներ	96ամիս

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում:

4.2.Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ

Սեփական ուժերով կառուցվող անավարտ հիմնական միջոցները հաշվառվում են դրանց վրա կատարված ծախսումների հանրագումարով: Անավարտ հիմնական միջոցներին ծախսումների վերագրումը կատարվում է ՀՀՄՍ 2 «Պաշարներ» ստանդարտում վաճառքի համար արտադրվող (պատրաստվող) ակտիվների համար բերված մոտեցումներին համապատասխան:

Կապալառուի կողմից կառուցվող հիմնական միջոցները հաշվառվում են կապալառուից ընդունված (Ընկերության կողմից հատուցման ենթակա) աշխատանքների արժեքի հանրագումարով:

Այն դեպքում, երբ հիմնական միջոցները կառուցվում են միաժամանակ և՛ սեփական ուժերով, և կապալառուի կողմից, դրանց վերագրվող ծախսումները որոշվում են վերը նշված ծախսումների հանրագումարով:

Արդեն ճանաչված հիմնական միջոցների վրա կատարված հետագա ծախսումներն ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտներն ավելի շատ, քան ակնալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից դեպի հիվանդանոց: Մյուս բոլոր դեպքերում հետագա ծախսումները ճանաչվում են որպես հաշվետու ժամանակաշրջանի ծախս:

Տեղակայման ենթակա սարքավորումների ձեռքբերումը հաշվառվում է այնպես, ինչպես հիմնական միջոցների ձեռքբերումը:

4.3.Ոչ նյութական ակտիվներ

4.3.1. Ոչ նյութական ակտիվները ֆիզիկական սուբստանցիայից զուրկ որոշելի (իդենտիֆիկացվող) ոչ դրամային ակտիվներ են, որոնք, որպես կատարված գործառնությունների (դեպքերի) արդյունք՝

ա) վերահսկվում են Ընկերության կողմից,

բ) պահվում են Ընկերությունում՝

- ծառայություններ մատուցելու,
- այլ անձանց վարձակալության տալու, կամ՝
- վարչական նպատակներով օգտագործելու համար,

գ) ունեն սահմանափակ օգտակար ծառայության ժամկետ,

դ) ներառվում են ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտի գործողության ոլորտում:

4.3.2. Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարի պարբերական բաշխումը նրա օգտակար ծառայության ընթացքում:

Ամորտիզացվող գումարն ակտիվի սկզբնական արժեքի կամ ֆինանսական հաշվետվություններում դրան փոխարինող այլ գումարի և մնացորդային արժեքի տարբերությունը:

Օգտակար ծառայություն՝

ա) այն ժամանակահատվածը, որի ընթացքում Ընկերությունն ակնկալում է օգտագործել ակտիվը, կամ՝

բ) արտադրանքի այն քանակը կամ աշխատանքների, ծառայությունների այն ծավալը, որն ակնկալվում է ստանալ (կատարել, մատուցել) ակտիվի օգտագործման միջոցով:

4.3.3. Ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և՝

բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ընկերությունը պետք է գնահատի ապագա տնտեսական օգուտների հավանականությունը՝ կիրառելով խելամիտ և հիմնավորված ենթադրություններ, որոնք արտացոլում են ղեկավարության՝ այն տնտեսական պայմանների բազմության լավագույն գնահատականը, որոնք առկա կլինեն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

4.3.4. Ոչ նյութական ակտիվն սկզբնապես պետք է չափվի սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

4.3.5. Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով (հաշվի առած հետագա ավելացվող ծախսումները)՝ հանած ցանկացած կուտակված ամորտիզացիա և ցանկացած կուտակված արժեզրկումից կորուստ:

4.3.6. Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պետք է պարբերաբար բաշխվի նրա՝ լավագույն գնահատականի հիման վրա որոշված օգտակար ծառայության ընթացքում: Սովորաբար ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը չի գերազանցում քսան տարին՝ սկսած այն ամսաթվից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար: Ամորտիզացիան պետք է հաշվարկվի այն պահից, երբ ակտիվը մատչելի է օգտագործման համար:

4.3.7. Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունը հետևյալն է.

Դասի անվանումը	Օգտակար ծառայությունը
Համակարգչային ծրագրեր	96 ամիս

բայց ոչ ավելի ոչ նյութական ակտիվի իրավաբանորեն ամրագրված օգտագործման ժամանակահատվածից:

4.3.8. Ամորտիզացիայի հաշվարկման կիրառվող մեթոդը պետք է արտացոլի այն մոդելը, որով Ընկերությունը սպառում է ակտիվի տնտեսական օգուտները: Ընկերությունը կիրառում է գծային մեթոդը:

4.4. Պաշարներ

4.4.1 Բուժսպասարկման ծառայությունների մատուցման ինքնարժեքը կազմված է անմիջականորեն ծառայություն մատուցելու գործում զբաղված անձնակազմի վարձատրության ծախսումներից, օգտագործվող դեղամիջոցների ծախսումներից, ինչպես նաև ծառայություն մատուցելու հետ կապված համապատասխան արտադրական վերադիր (փոփոխուն և հաստատուն) ծախսումներից:

Իրացման և վարչական վերադիր ծախսումները ծառայությունների ինքնարժեքի մեջ չեն ներառվում, այլ ճանաչվում են որպես ծախս այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դրանք կատարվել են:

Հաստատուն արտադրական վերադիր ծախսումները ծառայության մատուցման հետ կապված այնպիսի անուղղակի ծախսումներն են, որոնք համեմատաբար կայուն են, անկախ ծառայության ծավալից, օրինակ՝ բուժսպասարկման նպատակով օգտագործվող արտադրական շենքերի և սարքավորումների մաշվածությունը, դրանց շահագործման և պահպանման ծախսումները:

Փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները ծառայության մատուցման հետ կապված այնպիսի անուղղակի ծախսումներն են, որոնք ուղղակիորեն կամ համարյա ուղղակիորեն փոփոխվում են՝ ծառայության ծավալին համամասնորեն, օրինակ՝ բուժսպասարկմանն առնչվող տեխնիկական անձնակազմի աշխատանքի վարձատրությունը:

4.4.2. Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ (ՖԻՖՈ) բանաձևով:

4.4.3. Պաշարների ինքնարժեքն իջեցվում է մինչև իրացման զուտ արժեքի մակարդակ՝ ըստ տեսակների հաշվեկշռի ամսաթվի դրությամբ: Ծառայություններ մատուցելու նպատակով պահվող նյութերը և այլ պաշարները չեն վերագնահատվում ինքնարժեքից ցածր, եթե ակնկալվում է, որ ծառայությունը, որի մատուցման համար դրանք օգտագործվելու են, վաճառվելու է ինքնարժեքին հավասար կամ գերազանցող գներով:

Պաշարների ինքնարժեքի՝ մինչև իրացման զուտ արժեք ցանկացած դուրսգրում ճանաչվում է ծախս այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվել է ինքնարժեքի իջեցումը: Պաշարների նախկինում դուրս գրված գումարի ցանկացած վերականգնում, որն առաջանում է իրացման զուտ արժեքի բարձրացումից, ճանաչվում է որպես եկամուտ այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ կատարվում է բարձրացումը:

4.4.4. Ժամկետանց դեղամիջոցների գծով ճանաչվում է արժեքի նվազում հաշվեկշռային արժեքի չափով:

4.5.Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Եթե առկա են օբյեկտիվ ապացույցներ, որ տեղի է ունեցել դեբիտորական պարտքերի արժեզրկում, ապա ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է ուղղակիորեն կամ պահուստավորման միջոցով:

Դեբիտորական պարտքը ճանաչվում է հաշվեկշռում այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ, այսինքն՝ երբ առաջանում է պահանջի իրավունքը:

4.6.Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ և անկանխիկ դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները:

Ընկերությունը դրամարկղային գործառնություններն իրականացնում է Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասի և 387-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և նշված հոդվածների հիման վրա 2017թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ կառավարության կողմից հաստատված N 1260-Ն որոշման պահանջները:

4.7.Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.8. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհների հիմնական պայմանն այն է, որ դրանց ստացման իրավունք ունեցող կազմակերպությունը պետք է գնի, կառուցի կամ որևէ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ:

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես նվազեցում ակտիվի հաշվեկշռային արժեքը որոշելիս: Այսինքն շնորհը նվազեցվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս և արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

Ակտիվին վերաբերող շնորհների վերադարձումն արտացոլվում է հետաձգված եկամուտների կրճատման միջոցով՝ վերադարձման գումարի չափով: Երբ հետաձգված եկամտի մեծությունը չի բավարարում շնորհի վերադարձումը, չբավարարող մասի չափով այն ճանաչվում է որպես ծախս:

Եկամուտներին վերաբերող շնորհներն այն շնորհներն են, որոնք չեն վերաբերում ակտիվներին, ներառյալ ոչ դրամային շնորհները, ճանաչվում և չափվում են իրենց իրական արժեքով այն դեպքերում, երբ կա հիմնավորված երաշխիք, որ՝

ա) Ընկերությունը կատարելու է դրան կից պայմանները, և՝

բ) շնորհներն ստացվելու են:

Եկամուտներին վերաբերող շնորհների վերադարձումն առաջին հերթին կատարվում է տվյալ շնորհի հետ կապված չմարված հետաձգված (դեռևս եկամուտ չճանաչված) կրեդիտային մնացորդի հաշվին: Այնքանով, որքանով վերադարձման ենթակա գումարը գերազանցում է այդպիսի հետաձգված կրեդիտային մնացորդը, կամ եթե հետաձգված կրեդիտային մնացորդ չկա, ապա վերադարձումն անմիջապես ճանաչվում է որպես ծախս:

4.9. Դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվանցումը

Դեբիտորական և կրեդիտորական պարտքերը հաշվանցվում են այն դեպքերում, երբ Ընկերությունը՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝

բ) մտադիր է՝ կա՛մ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կա՛մ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

4.10. Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո:Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճար, եթե Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարըվճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտավորությունը:

4.11. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք, ունի ընթացիկ իրավական կամ կառուցողական պարտավորություն, որը հնարավոր է արժանահավատորեն գնահատել և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստները որոշվում են ակնկալվող դրամական միջոցների ապագա հոսքերը զեղչելով հարկումից առաջ այն դրույքով, որն արտացոլում է տվյալ շուկայում դրամի ժամանակին արժեքը և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերը: Զեղչի վերականգնումը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

4.12. Հասույթ

Հասույթն իրենից ներկայացնում է հաշվետու տարվա ընթացքում Ընկերության կողմից մատուցված ծառայությունների և կատարած աշխատանքների հատուցման իրական արժեքը: . Ընկերության կողմից մատուցված ծառայությունների իրացումից հասույթը ճանաչվում է՝

ա) բուժսպասարկման ծառայությունների գծով՝ հաշվի առնելով նաև յուրաքանչյուր ամսում կատարվելիք ճշգրտումները (մասնավորապես՝ պետական պատվերի գծով ճշգրտումները).

բ) այլ ծառայությունների գծով՝ դրանց մատուցմանը զուգընթաց՝ յուրաքանչյուր ամսվա կտրվածքով:

4.13. Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով այդ ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես այլ ոչ գործառնական եկամուտ կամ ծախս:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ, երբ հիվանդանոցը դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի 108 հոդվածի 7-րդ կետի Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով Ընկերության համար եկամուտ չի համարվում՝ ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման դրական արդյունքը:

Համաձայն ՀՀ Հարկային Օրենսգրքի 112 հոդվածի 7-րդ կետի Շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով Ընկերության համար ծախս չի համարվում՝ ակտիվների, այդ թվում՝ արտարժույթի, արտարժույթով արտահայտված այլ ակտիվների, ինչպես նաև բանկային ոսկով և այլ թանկարժեք մետաղներով արտահայտված ակտիվների վերագնահատման բացասական արդյունքը:

4.14. Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված շահութահարկը հաշվարկվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն, որը հաշվի է առնում ֆինանսական հաշվետվությունների համար ակտիվների և պարտավորությունների հաշվեկշիռային գումարների և հարկային նպատակներով կիրառվող գումարների տարբերությամբ:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են իրացվել չօգտագործված հարկային վնասները և փոխհատուցումները:

4.15. Կառուցման պամանագրեր

Երբ կառուցման պամանագրի կատարման արդյունքները հնարավոր է արժանահավատորեն գնահատել, հասույթը և ծախսումները ճանաչվում են հաշվի առնելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ պայմանագրային աշխատանքների կատարման աստիճանը, որը չափվում է պայմանագրային աշխատանքների կատարման ֆիզիկական համամասնությանը համապատասխան:

Երբ կառուցման պամանագրի կատարման արդյունքները հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, պայմանագրի հասույթը ճանաչվում է պայմանագրի փաստացի ծախսումների չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

4.16. Ֆինանսական ծախսեր

Ֆինանսական ծախսերը ներառում են վարկի և փոխառությունների գծով տոկոսային ծախսերը: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը,

կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերաբերող փոխառությունների ծախսերից, որոնք կապիտալացվում են՝որպես այդ ակտիվի մի մաս:

4.17. Վարձակալություն

4.17.1 Ֆինանսական վարձակալություն

Որպես վարձակալ Ընկերությունը հաշվապահական հաշվեկշռում ֆինանսական վարձակալությունը ճանաչում է որպես ակտիվ և պարտավորություն այն գումարով, որը վարձակալության սկզբում հավասար է վարձակալված գույքի իրական արժեքին կամ վարձակալական նվազագույն վճարների:

Ֆինանսական վարձակալությունն առաջացնում է մաշվածության ծախսումներ՝ մաշվող (ամորտիզացվող) ակտիվների գծով, ինչպես նաև ֆինանսական ծախսեր՝ յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար: Վարձակալված մաշվող (ամորտիզացվող) ակտիվների մաշվածության հաշվարկման քաղաքականությունը համապատասխանում է սեփական ակտիվների մաշվածության հաշվարկման քաղաքականությանը, իսկ մաշվածության (ամորտիզացիայի) հաշվարկը կատարվում է համաձայն ՀՀՄՍ 16 «Հիմնական միջոցներ» և ՀՀՄՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ» ստանդարտների: Եթե չկա բավարար համոզվածություն, որ Ընկերությունը վարձակալության ժամկետի վերջում ձեռք է բերելու սեփականության իրավունքը, ապա ակտիվն ամբողջովին ամորտիզացվում է հետևյալ երկու ժամկետներից առավել կարճի ընթացքում՝ վարձակալության ժամկետի կամ օգտակար ծառայության ժամկետի:

4.17.2 Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալությունը ֆինանսական վարձակալություն չհանդիսացող վարձակալություն է, այսինքն՝ այնպիսի վարձակալություն է, որի դեպքում վարձակալին չեն փոխանցվում վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները:

Գործառնական վարձակալության տրված ակտիվները ճանաչվում են վարձատուի հաշվեկշռում:

Որպես վարձակալ, գործառնական վարձակալության գծով վարձավճարները վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են որպես ծախսում՝ գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ

հիմունք ավելի լավ չի ներկայացնում ակտիվի օգտագործումից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը:

Որպես վարձատու, վարձակալական եկամուտը (բացառությամբ մատուցված ծառայությունների գծով եկամուտներից) վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում է գծային հիմունքով, եթե մեկ այլ սիստեմատիկ հիմունք ավելի լավ չի ներկայացնում վարձակալության տրված ակտիվներից օգուտների ստացման ժամանակային գրաֆիկը: Սկզբնական ուղղակի ծախսումները, որոնք հատուկ կատարվել են գործառնական վարձակալությունից եկամուտ վաստակելու նպատակով, հետաձգվում

և բաշխվում են վարձակալության ժամկետի ընթացքում՝ վարձակալական եկամտի ճանաչմանը համամասնորեն:

5.ՀԱՍՈՒՅԹ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ,այդ թվում՝	4,724,221	2370870
▪ վճարովի բուժսպասարկման ծառայություն.գծով	2,323,393	1435742
▪ բյուջեից ֆինանս. բուժսպասարկման ծառ.գծով	2,314,464	867745
▪ վարձավճարներից եկամուտներ	60,076	45164
▪ ավտոկանգառից ստացված եկամուտներ	22,401	17431
▪ այլ վճարովի ծառայություններից եկամուտներ	3,887	4788
Ընդամենը	4,724,221	**2370870**

6.ՎԱՃԱՌՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք,որից	(3984223)	(2015840)
▪ աշխատավարձ բուժաշխատողներին	(2605127)	(1490405)
▪ ուղղակի նյութական ծախսումներ(դեղորայք)	(838708)	(352000)
▪ ուղղակի նյութական ծախսումներ(օգն.դեղորայք)	(251629)	(96049)
▪ Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(121048)	(72128)
▪ Ուղղակի արտադրական այլ ծախսումներ	(167711)	(5258)
Ընդամենը	**(3984223)**	**(2015840)**

7.ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Եկամուտներ շնորհներից	356,777	118613
Գործառնական այլ եկամուտներ	18,407	7196
Ընդամենը	**375,184**	**125809**

8.ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	(17)	(46)
Մարքեթինգի և գովազդի ծախսեր	(24)	(0)
Ընդամենը	**(41)**	**(46)**

9.ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Աշխատավարձ և սոց.վճարներ	(236,730)	(160404)
Հիմնական միջոցների մաշվածության ծախսեր	(139,226)	(40600)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(246461)	(165816)
Կապի և հեռահաղորդակցության ծախսեր	(2795)	(1804)
Աուդիտորական և խորհուրդատվական ծախսեր	(960)	(1760)
Բանկային և ապահովագրական ծախսեր	(2448)	(2037)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	(31838)	(10609)
Այլ վարչական ծախսեր	(108303)	(30755)
Ընդամենը՝	**(768761)**	**(413785)**

10.ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Հիմնական միջոցների վարձ.գծով ծախսեր	(134015)	(83828)
Եկամտային հարկի զեղչումից ծախսեր	(2131)	(134015)
Անհատույց տրված ակտվների գծով ծախեր	(9689)	(134015)
Գործառնական այլ ծախսեր	(89)	(134015)
Ընդամենը՝	**(145924)**	**(65143)**

11.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ֆինանսական եկամուտ	6127	540
Ընդամենը՝	**6127**	**540**

12.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2021թ.	2020թ.
Ֆինանսական ծախսեր	(91107)	(14169)
Ընդամենը՝	**(91107)**	**(14169)**

13.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Սկզբնական արժեք	Շենքեր, շինություններ	Հողամաս	Մեքենա սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Օգտագծ.համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Ընդամենը
Մնացորդը 31դեկտեմբերի 2020թ.	1185273	1806	824332	34570	535	776055	140051	2962623
Մնացորդը 01 հունվարի 2021թ.	1185273	1806	824332	34570	535	776055	140051	2962623
Ավելացումներ	515906		388181			34297	15550	972673
Ներքին տեղաշարժեր						566589		566589
Օտարումներ								
Մնացորդը 31դեկտեմբերի 2021թ.	1701179	1806	1212513	34570	535	243764	174340	3368707
Մաշվածությունը								
Մնացորդը 31դեկտեմբերի 2020թ.	239445		287594	25043	173	-	83272	635569
Մնացորդը 01 հունվարի 2021թ..	239445		287636	25043	173	-	83272	635569
Տարվա մաշվածությունը	75237		127262	1115	107		18398	222119
Օտարումներ								
Մնացորդը 31դեկտեմբերի 2021թ.	314682		414898	26158	280	-	101670	857688
Հաշվեկշռային արժեք								
Առ 31դեկտեմբերի 2020թ.	**945828**	**1806**	**536738**	**9527**	**362**	**776055**	**56779**	**2327054**
386	**1386497**	**1806**	**797615**	**8412**	**255**	**243764**	**72670**	**2511019**

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
31.12.2021թ. դրությամբ

Ընկերության հիմնական միջոցների արժեքը 2020թ. դեկտեմբերի 31-ին 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ բացարձակ արժեքով ավելացել է 724904,0 հազ.դրամով կամ 35,8 %-ով,այդ թվում՝

- ՀՀ Առողջապահության նախարարության կողմից կորոնավիրուսային վարակի կանխարգելման,վերահսկման,բուժման կենտրոնի ստեղծման նպատակով Ընկերությանը հատկացվել է 532292,0 հազ.դրամ,որի հաշվին ք.Երևան,Հասարթյան 9 հասցեում գտնվող,Ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքում նշված գումարի չափով կատարվել է հիմնանորոգում , որոնք կապիտալացվել են շենքի վրա,

2021թ. ընթացքում Ընկերության հիմնական միջոցներն ավելացել են 972673,0 հազ.դրամո:

2021թ. ընթացքում Ընկերության կողմից հաշվարկվել է 222119,0 հազ.դրամ հիմնական միջոցների մաշվածություն,այդ թվում՝

- 75237,0 հազ.դրամ շենքերի և շինությունների գծով,
- 127262,0 հազ.դրամ մեքենասարքավորումների գծով,
- 467,0 հազ.դրամ կառուցվածքների գծով,
- 1115,0 հազ.դրամ տրանսպորտային միջոցների գծով,
- 18398,0 հազ.դրամ արտադրատնտեսական գույքի գծով,
- 107,0 հազ.դրամ այլ հիմնական միջոցների գծով:

Հիմնական միջոցների գույքագրում

2021թ. նոյեմբերի 1-ին Ընկերության տնօրենի թիվ Գ-2021/1 հրամանով ստեղծվել է գույքագրման հանձնաժողով և անց է կացվել ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությամբ առկա ակտիվների և պարտավորությունների գույքագրում: Գույքագրումն իրականացվել է 2021թ. նոյեմբերի 1-ից և ավարտվել է 2021թ. դեկտեմբերի 1-ին: Գույքագրման արդյունքներով ըստ ներկայացված տվյալների տարբերություններ չեն հայտնաբերվել:
Գույքագրման արդյունքներով կազմվել են համապատասխան ակտեր և ներկայացվել են հաշվապահություն:

Հիմնական միջոցների գրավադրում

Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը և թվով 1321 շարժական գույք Ընկերության բաժնետոմսերի 90,5 տոկոս սեփականատեր ,,Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան,,Հիմնադրամի 2018թ. ապրիլի 17-ի Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ գրավադրվել ,,Հայբիզնեսբանկ,, ՓԲԸ-ում՝ 10 տարի ժամկետով:

Վարձակալված հիմնական միջոցներ

2019թ հունվարին Ընկերությունը Ա/Ձ Լուսյա Հայրապետյանի հետ կնքված վարձակալության պայմանագրով վարձակալել է բժշկական սարքավորում ,ամսական 3000,0 հազ.դրամ վարձավճարով:

2019թ հունվարի 1-ին Ընկերությունը Ա/Ձ Վարսիկ Բակունցի հետ կնքված վարձակալության պայմանագրով վարձակալել է բժշկական սարքավորում, ամսական 3000,0 հազ.դրամ վարձավճարով:

Վարձակալության տրված հիմնական միջոցներ

2017թ հունվարի 10-ին Ընկերությունը ,,ԱՎԱ ՄԵԴ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրով 5 տարի ժամկետով վարձակալության է

տրամադրել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 1216քմ տարածք, ամսական 1200,0 հազ.դրամ վարձավճարով:

2020թ. ապրիլի 1-ին կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրով վարձավճարի չափը սահմանվել է ամսական 1800,0 հազ.դրամ:

2019թ փետրվարի 15--ին Ընկերությունը ,,ԹԵՍԹԻ ԼԱՆՉ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրով վարձակալության է տրամադրել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 182.5 քմ տարածք ,ամսական 350,0 հազ.դրամ վարձավճարով:

2019թ մայիսի 13-ին Ընկերությունը ,,ԱրմենՏել,, ՓԲԸ-ն հետ կնքված վարձակալության պայմանագրով, 10 տարի ժամկետով վարձակալության է տրամադրել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 55 քմ տարածք, ամսական 70,0 հազ.դրամ վարձավճարով:

2019թ նոյեմբերի 8-ին Ընկերությունը ,,ՆԱՏԱԼԻ ՖԱՐՄ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված վարձակալության պայմանագրով 10 տարի ժամկետով վարձակալության է տրամադրել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 761.3 քմ տարածք, ամսական 850.0 հազ.դրամ վարձավճարով,որի հաշվարկն ըստ պայմանագրի 1.6 կետի սկսվում է 2020թ. փետրվարի 1-ից,պայմանագրով սահմանված, վարձակալի կողմից վերանորոգման աշխատանքներն ավարտվելուց հետո:
2020թ. ապրիլի 16-ին կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքված լրացուցիչ համաձայնագրով վարձակալված տարածքին ավելացվել է 69,5 քմ:
2020թ. օգոստոսի 6-ին կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքված լրացուցիչ համաձայնագրով գույքի ամսական վարձավճարը սահմանվել է 1840,0 հազ.դրամ:

2019թ նոյեմբերի 12-ին Ընկերությունը Ա/Ձ Աննա Միրզոյանի հետ կնքված վարձակալության պայմանագրով 5 տարի ժամկետով վարձակալության է տրամադրել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 52 քմ տարածք,ամսական 120,0 հազ.դրամ վարձավճարով:
2020թ. փետրվարի 25-ին կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքված լրացուցիչ համաձայնագրով գույքի ամսական վարձավճարը սահմանվել է 220,0 հազ.դրամ:

2020թ հունիսի 5-ին Ընկերությունը ,,Գոռ Դիլարյան,,ՍՊԸ-ն հետ կնքված վարձակալության պայմանագրով 10 տարի ժամկետով վարձակալության է տրամադրել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 335,7 քմ մակերեսով տարածք: 2020թ. սկսած 01,10,2020թ. ամսական վարձավճարը սահմանվել է 500,0 հազ.դրամ,մինչ այդ տարածքում կատարվելու են վերանորոգման աշխատանքներ,տարածքը բերվելու է աշխատանքային տեսքի:

2020թ օգոստոսի 6-ին Ընկերությունը ,,Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան,, Հիմնադրամի հետ կնքված անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով 10 տարի ժամկետով ժամանակավոր անհատույց օգտագործման է հանձնել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 2153,6 քմ մակերեսով տարածք:

2020թ սեպտեմբերի 23-ին Ընկերությունը ,,ԲՌԱՆՉ 33,,ՍՊԸ-ն հետ կնքված վարձակալության պայմանագրով մինչև 23,11,2020թ. ժամկետով վարձակալության է տրամադրել Հասրաթյան 9 հասցեում գտնվող 202,1քմ մակերեսով տարածք,ամսական 400,0 հազ.դրամ վարձավճարով:

2020թ. նոյեմբերի 20-ին կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կնքված լրացուցիչ համաձայնագրով պայմանագրի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 30,12,2021թ.:
2020թ. հունիսի 1-ին Ընկերությունը ,,ԱՐԵԶԱ,,ՍՊԸ-ն հետ կնքել է առանց իրավաբանական անձ կազմավորելու համատեղ գործունեության պայմանագիր,որի համաձայն որպես մասնակից ներդրել է՝

- գլխավոր մասնաշենքի 2-րդ հարկի վիրաբուժական 1-ին բաժանմունքից 12 հիվանդասենյակ,
- կինիկական մասնաշենքի 2-րդ հարկի վիրաբուժական 4-րդ բաժանմունքից 9 հիվանդասենյակ,
- կինիկական մասնաշենքի 4-րդ հարկի 3-րդ բաժանմունքից 10 հիվանդասենյակ,
- կինիկական մասնաշենքի 5-րդ ,,comfort+,, բաժանմունքից 20 հիվանդասենյակ,
- կինիկական մասնաշենքի 6-րդ հարկի թերապևտիկ բաժանմունքից 15 հիվանդասենյակ:

Աուդիտի ընթացքում ուսումնասիրվել է Ընկերության կողմից կնքված վարձակալության պայմանագրերի համապատասխանությունը գործող օրենսդրությանը:Պարզվել է, որ Ընկերության կողմից կնքված վարձակալության պայմանագրերը կնքվել են գործող օրենսդրությանը հապատասխան՝ գրանցվել են անշարժ գույքի կադաստրում և վավերացվել են նոտարի կողմից:

14. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
Համակարգչային ծրագիր	300	356
Ընդամենը	**300**	**356**

15. ՊԱՇԱՐՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
Դեղորայք	112260	59483
Դեղորայք օգնություն	27362	65100
Տնտեսական և գրասենյակային նյութեր	9720	22125
Շինանյութ	6547	8162
Այլ նյութեր	18603	51677
Ընդամենը	**174491**	**206547**

2021թ. հունվարի 1-ի դրությամբ Ընկերության դեղատանն ու բաժիններում դեղորայքի մնացորդը կազմել է 124583.0 հազ.դրամ,որից օգնության դեղորայքը՝65100.0 հազ.դրամ: 2021թ. ընթացքում Ընկերությունն իր բնականոն գործընթացն ապահովելու նպատակով ձեռք է բերել 893557.0 հազ,դրամի դեղորայք,անհատույց ստացվել է 215675.0 հազ.դրամի դեղորայք: Տարվա ընթացքում օգտագործվել է 109845.0 հազ.դրամ դեղորայք: 31.12.2020թ. դրությամբ Ընկերության դեղատանն ու բաժիններում դեղորայքի մնացորդը կազմել է 139622.0 հազ.դրամ,այդ թվում՝ անհատույց ստացված դեղորայքի մնացորդը կազմել է 27362.0 հազ.դրամ:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ տնտեսական և գրասենյակային նյութերի մնացորդը կազմել է 22125.0 հազ.դրամ: Տարվա ընթացքում ձեռք է բերվել 59051.0 հազ.դրամ տնտեսական և գրասենյակային նյութեր ծախսվել է 71456.0 հազ.դրամի նյութեր և 31.12.2021թ. դրությամբ տնտեսական և գրասենյակային նյութերի մնացորդը կազմել է 9720.0 հազ.դրամ:

2021թ. հունվարի 1-ի դրությամբ շինարարական նյութերի մնացորդը կազմել է 8162.0 հազ.դրամ: Տարվա ընթացքում ձեռք է բերվել 18017.0 հազ.դրամ շինարարական նյութեր,տարվա ընթացքում ծախսվել է 19632.0 հազ.դրամի շինաննյութեր և 31.12.2021թ. դրությամբ շինարարական նյութերի մնացորդը կազմել է 6547.0 հազ.դրամ:

16. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
Առևտրային դեբիտորական պարտքեր*	192955	38631
Տրված ընթացիկ կանխավճարներ**	13144	7447
Ընթացիկ ակտիվեր հարկերի գծով	24	24
Այլ դեբիտորական պարտքեր	750	945
Ընդամենը	**206873**	**47047**

- 31.12.2021թ. դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությամբ առկա առևտրային դեբիտորական պարտքերից 117395,0 հազ.դրամը ՀՀ առողջապահության նախարարության պարտքն է,37353,0հազ.դրամը Ապահովագրական ընկերությունների գծով պարտքերն են, 18462,0 հազ.դրամը ,,Արեզա,,ՍՊԸ պարտքն է:

** Ստորև նեկայացվում է 31.12.2021թ. դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվությամբ առկա ,,Տրված ընթացիկ կանխավճարներ,, հաշվի մնացորդն ըստ կազմակերպությունների.

Անվանում	Հազ. դրամ
,,ԱԼՖԱ-ԷԼԵԿՏՐՈ,, ՍՊԸ	5900
,,Պրոմ էներգո,, ՍՊԸ	3500
,,Էլեկտրոմոնտաժ,, ՍՊԸ	3500
Ընդամենը	**12900**

17. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
Կանխիկը դրամարկղում	2276	2049
Դրամական միջոցներ հաշվարկային հաշիվներում	153612	82371
Ընդամենը	155888	84420

Ընկերությունը ներկայացրել է 31.12.2021թ. դրությամբ հաշվարկային հաշիվներում դրամական միջոցների մնացորդները հավաստող տեղեկանքներ հաստատված բանկի կողմից:

18. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Հազար դրամ

	31.12.2021թ.	31.12.2020թ.
Կանոնադրական կապիտալ	168849	168849
Ընդամենը	**168849**	**168849**

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմվում է բաժնետերերի կողմից ձեռք բերված բաժնետոմսերի անվանական արժեքից:
Ընկերության կանոնադրական կապիտալը սահմանում է նրա պարտատերերի շահերը երաշխավորող Ընկերության գույքի նվազագույն չափը:

Ըստ 26.10.2018թ. պետական ռեգիստրի կողմից հաստատված կանոնադրության Ընկերության կանոնադրական կապիտալը կազմել է 168849.0 հազար դրամ, որը կազմում է 168849 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 1000 դրամ:
Բոլոր 168849 (սովորական) անվանական բաժնետոմսերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և տեղաբախշված են բաժնետերերի միջև:
Ստորև ներկայացվում է տեղեկատվություն Ընկերության բաժնետերերի, նրանց ունեցած բաժնետոմսերի և կանոնադրական կապիտալում ունեցած բաժնեչափի մասին.արտահայտված տոկոսներով՝

h/h	Բաժնետերերի ազգանուն, անուն հայրանուն	Բաժնետոմսերի քանակը	Բաժնեչափը %
1.	«Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ	152811	90.501572
2.	Թամազյան Արթուր Համլետի	3377	2.000012
3.	Հարությունյան Արմեն Ռոբերտի	1689	1.000302
4	Մելքոնյան Օնիկ Մկրտիչի	1688	0.99971
5	Կիրակոսյան Մարինա	1688	0.99971
6	Վիրաբյան Ռիտա Թովմասի	1688	0.99971
7	Ստեփանյան Նորայր	1688	0.99971
8	Սարոյան Սեյրան	1688	0.99971
9	Սուլթանյան Տիգրան	844	0.499885
10	Գրիգորյան Ջուլիետա	844	0.499885
11	Հովհաննիսյան Եգոր	844	0.499885
		168849	100

19. ՉԲԱՇԽՎԱԾ ՇԱՀՈՒՅԹ

Հազար դրամ

	31.12.2021թ.	31.12.2020թ.
Չբաշխված շահույթ (չծածկված վնաս)	124848	26704
Ընդամենը	**124848**	**26704**

Ընկերության հաշվապահության կողմից աուդիտին ներկայացված հաշվապահական հաշվեկշռում 31.12.2020թ. դրությամբ զուտ շահույթի մնացորդը ներկայացվել է 26704.0 հազ.դրամ:
Աուդիտի արդյունքում պարզվել է, հետևյալը՝
2021թ. գործունեության ադյունքներով Ընկերության զուտ շահույթը կազմել է 89912.0 հազ.դրամ:
2021թ. կատարվել է 8382,0հազ.դրամ ֆին.արդյունքների ճշգրտում:
2021թ.դեկտեմբերի 31-ի դրությամբ չբաշխված շահույթի մնացորդը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ կազմել է 128848.0 հազար դրամ:

20. ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՎԱՐԿԵՐ ԵՎ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հազար դրամ	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
Երկարաժամկետ փոխառություններ կապակցող կողմից	1191042	1202500
Երկարաժամկետ վարկեր	70000	100000
Ընդամենը	**1261042**	**1302500**

31.12.2021թ. դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ առկա 1191042,0 հազ.դրամ ստացված փոխառությունը տրամադրել է Ընկերության հիմնական բաժնետեր «Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամը:
Աուդիտին է ներկայացվել նշված փոխառությունը հաստատող փոխադարձ ակտը ստորագրված և կնքված Փոխատուի և Փոխառուի կողմից:
2020թ. սեպտեմբերի 17-ին Ընկերությունը Հայբիզնես բանկի հետ կնքված վարկային պայմանագրով ստացել է 100000,0 հազ.դրամ վարկ:
Տարվա ընթացքում Ընկերության կողմից մարվել է 30000,0 հզ.դրամ վարկ և 31.12.2021թ. դրությամբ վարկի մնացորդը ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ կազմել է 70000,0 հազ.դրամ:

21.ԱԿՏԻՎՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՇՆՈՐՀՆԵՐ

Հազար դրամ	**31.12. 2021թ.**	**31.12.2020թ.**
Ակտիվներին վերաբերող շնորհներ	249733	846541
Եկամուտներին վերաբերող շնորհներ	30,590	41236
Ընդամենը	**280,323**	**887,877**

22..ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

Հազար դրամ	**31.12. 2021թ.**	**31.12.2020թ.**
Առևտրային կրեդիտորական պարտքեր	165601	112436
Ստացված կանխավճարներ	0	1736
Այլ կրեդիտորական պարտքեր	0	13092
Ընդամենը	**165601**	**127264**

23. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԲՅՈՒՋԵԻՆ

Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Շահութահարկի գծով հարկ	25564	0
Եկամտային հարկի գծով	46846	34251
Ավելացված արժեքի հարկի գծով	2243	1320
Գույքահարկի գծով	0	2486
Հողի հարկի գծով	0	238
Այլ պարտադիր վճարների գծով	4651	742
Ընդամենը	**79304**	**39037**

24. ԿԱՐՃԱԺԱՄԿԵՏ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԵՎ ՍՈՑՎՃԱՐՆԵՐԻ ԳԾՈՎ

Հազար դրամ	31.12.2021թ.	31.12.2020թ.
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	87920	57584
Պարտքեր ապահովագրավճարների գծով	**0**	**0**
Պարտքեր դեպոնենտի գծով	-	**0**
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր սոցվճարների գծով	**8188**	**0**
Ընդամենը	**96,108**	**60241**

25.ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում Բաժնետերերի ընդհանուր ժողովին իր գործունեության վերաբերյալ:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկում է հետևյալ ռիսկերին.

- Վարկային ռիսկ
- Պարտքային ռիսկ
- Արժույթային ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Ընկերության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները:

ա/ Վարկային ռիսկ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ առկա է 1161042.0 հազար դրամի փոխառություն, որը պետք է մարվի 2023,2024,2027գ և 2028թթ.: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ չունի, (2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը նոյնպես չուներ կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ):

բ/ Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը ցուցաբերում է առանձնահատուկ մոտեցում պայմանագրային յուրաքանչյուր կողմի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում գործընկերներից ստացվելիք դեբիտորական պարտքերի գծով:

Հազ. դրամ	**31.12.2021թ.**	**31.12.2020թ.**
Առևտրային դեբիտորական պարտքեր	192955	38631
Տրված կանխավճարներ	13144	7448
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	155888	84603
Ընդամենը	**361987**	**130682**

գ/ Արժույթային ռիսկ

Ընկերությունը ենթակա է արտարժույթային ռիսկի, երբ իրացումները, ձեռքբերումները կատարվում են և փոխառությունները ստացվում ու տրվում են ոչ Ընկերության ֆունկցիոնալ արժույթով:

Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարումը կարգավորող ձևակերպված քաղաքականություն,սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա՝Ընկերության գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու,ինչպես նաև շուկայում մասնակիցների վստահությունը պահպանելու համար:

Դա կարելի է իրագործել դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման, հիմնականում Ընկերության գործառնական գործունեության դրամական միջոցների հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
31.12.2021թ. դրությամբ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերության պարտքային և սեփական կապիտալի հարաբերակցությունը կազմում էր՝

հազ. դրամ

	2021թ.	**2020թ.**
Ընդամենը պարտավորություններ	2,,764,003	2,476,122
Հանած դրամական միջոցները և դրանց համարժեքները	155,888	84,603
Զուտ պարտքը	**2,919,891**	**2391519**
Ընդամենը սեփական կապիտալ	293,697	195553
Պարտքային և սեփական կապիտալի հարաբերակցությունը . դեկտեմբերի 31-ի դրությամբ	**9,94**	**12,23**

Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Ընկերության փոխկապակցված կողմերն են՝

- Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան,,Հիմնադրամ,
- Թամազյան Արթուր Համլետի
- Հարությունյան Արմեն Ռոբերտի,
- Մելքոնյան Օնիկ Մկրտիչի,
- Կիրակոսյան Մարինա,
- Վիրաբյան Ռիտա Թովմասի,
- Ստեփանյան Նորայր,
- Սարոյան Սեյրան,
- Սուլթանյան Տիգրան,
- Գրիգորյան Ջուլիետա,
- Հովհաննիսյան Եգոր Գեղամի:

Համաձայն «Փոխկապակցված կողմերի բացահայտում» ՀՀՄՍ 24–ի կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Ընկերության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Ստորև ներկայացվում է տեղեկատվություն Ընկերության փոխկապակցված կողմերի հետ իրականացված գործարքների գծով:
2021թ. Ընկերությունը որպես կապակցված կողմ, հիմնական բաժնետեր «Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամի հետ իրականացրել է հետևյալ գործարքները՝

- վճարել է 10733,0հազ.դրամ փոխառության տոկոս,
- անհատույց ստացել է 4223,0 հազ.դրամ դեղորայք, բժշկական պարագաներ և սարքավորումներ:

- վարձակալված SIEMENS մակնիշի բժշկական սարքավորման համար վճարել է 3691,0 հազ.դրամ վարձավճար:

2021թ. Ընկերությունը փոխկապակցված անձ համարվող մնացած բաժնետերերի հետ գործարքներ չի կատարել:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերության ղեկավար անձնակազմին վճարվել է 46790,0 հազար դրամ աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ ,2020թ. այն կազմել է 47859,0 հազար դրամ:

26. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

(ա) ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ

Ընկերությունը բավարարում է ՀՀ կառավարության պահանջները կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

(բ) ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն ամբողջությամբ վերահսկվում է Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

(գ) ՀԱՐԿԱՅԻ ՆՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի հարկային համակարգը համեմատաբար նոր է և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են մեկնաբանություններ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանորեն է գնահատել հարկային պարտավորությունները և կատարել է համապատասխան հատկացումներ հարկային պարտավորությունների գծով: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել Ընկերության համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

«ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՎԻՐԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ՝ Է. Ս. ԲԱՐՍԵՂՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ՝ Ա. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ